

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում, յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման համար գերակա նշանակություն է ստանում ներդրումների իրականացումը և դրանց արդյունավետության գնահատման տարատեսակ մեթոդների մշակումը: Ներդրումներում վերջին տարիներին զգալիորեն աճել են ներդրումները ֆինանսական ոլորտում, որը կապված է ՀՀ բանկային համակարգի զարգացման հետ: Բանկերը ներդրումների իրականացման գործընթացում կենտրոնական դեր են իրականացնում: Բանկերը պասիվային գործառնությունների շնորհիվ ներգրավում են դրամային միջոցներ, իսկ ակտիվային գործառնությունների միջոցով իրականացնում դրանց տեղաբաշխում՝ ակնկալելով հատույցի որոշակի մակարդակ: Հիմնական գործոնները, որոնք որոշում են բանկերի ներդրումները, եկամտի ստացումն է և իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովումը: Բանկերն իրենց ռազմավարության շրջանակում մշակում են նաև ներդրումային ռազմավարություն, որտեղ հստակ նշվում է ներդրումների ակնկալվող ուղղությունները և ներդրումային ծրագրերի նախըտրելի հատույցը: Սակայն բանկը չի կարող շեշտը դնել միայն ներդրումային նախագծի եկամտաբերության վրա: Բանկերն իրենց գործունեության ընթացքում պետք է կարողանան անհրաժեշտ հարաբերակցություն պահպանել եկամտաբերության և իրացվելիության միջև: Այս հարաբերակցության օպտիմալացումը կապված է բանկի ընդհանուր կապիտալից, ընդ որում յուրաքանչյուր բանկ պետք է ձգտի հզորացնել իր ընդհանուր կապիտալը՝ պահպանելով համաձայնություններ սեփական կապիտալի և հաճախորդներից ներգրավված միջոցների միջև: Բացի այդ, բանկերի գործունեությունը կարգավորվում է ԿԲ-ի սահմանած նորմատիվներով, որտեղ տեղ են գտել կապիտալի համարժեքության հետևյալ նորմատիվները.

- Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը,
- Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը

Համաշխարհային բանկային ձգնաժամը կապիտալը դարձրեց սակավ ռեսուրս և ստիպեց բանկներին առավել կենտրոնանալ կապիտալի արդյունավետ կառավարման հիմնահարցերի շուրջ: Կապի-

տալի կառավարումը պայմանավորված է ռիսկերով, քանի որ այն կարող է առաջ բերել մեծածավալ կապիտալ կորուստներ: Սա է պատճառը, որ բանկերը պետք է իրականացնեն ռիսկերի կառավարմանը միտված կապիտալ ներդրումների քաղաքականություն:

Ներդրումային նախագծերի արդյունավետության գնատման օպտիմալ մեթոդների մշակումը դարձավ բանկային համակարգի կարևորագույն հիմնախնդիր: Ընդ որում այս գործընթացում ներառված են ինչպես գործադիր ղեկավարները, այնպես էլ բաժնետերերը: Ներդրումային նախագծերի կառավարման հիմնարցերը ձեռք են բերել հույժ կարևորություն նաև բանկային համակարգում:

Քննարկելով առևտրային բանկի ներդրումները, նախ պետք է ներկայացնենք այն հիմնական ուղղությունները, որտեղ բանկերը կարող են ներդրում իրականացնել:

Բանկը կարող է իրականացնել հետևյալ ներդրումներ

1. Կապիտալ ներդրումներ

2. Ներդրումներ արժեթղթերում

3. Տարատեսակ վարկերի տրամադրում և այլն...

Ներդրումային նախագծերի ընտրությունը դարձել է առևտրային բանկերի հիմնական խնդիրը:

Ներդրումային նախագծերի արդյունավետության գնահատման մի շարք մեթոդներ կան: Առևտրային բանկերը կարող են կիրառել դրանցից մի քանիսը: Առավել տարածված է զեղչված դրամական հոսքերի մեթոդը, որի էությունը կայանում է նրանում, որ նախագծի հետ կապված դրամական ներհոսքը և արտահոսքը զեղչվում է նախապես որոշված դրույքաչափով: Այս մեթոդի շրջանակներում նախագծերի արդյունավետության որոշման համար կարող է կիրառվել հետևյալ եղանակները

- Ջուտ ներկա արժեքի մեթոդը
- Վերադարձի ներքին դրույքի մեթոդը
- Հետվճարի ժամանակաշրջանի մեթոդ

1. **Ջուտ ներկա արժեքի մեթոդի էությունը կայանում է դրամական հոսքերի զուտ ներկա արժեքի որոշման մեջ:**

Ներկա արժեքը կանխիկի կամ դրան համարժեք մի գումար է, որը ենթակա է ստացման կամ վճարման ապագա ամսաթվին՝ զեղչված է որոշակի չափով: Ջեղչումը սկսվում է ապագա արժեքից և վերածում է ապագա արժեքը ներկա արժեքի: Նախագծի զուտ ներկա արժեքի որոշման համար զեղչվում են նախագծի հետ կապված բոլոր դրամային ներհոսքերն ու արտահոսքերն: Ընդ որում նախագծի զուտ ներկա արժեքի որոշման համար դրամական ներ-

հոսքերի ներկա արժեքից հանում են դրամական արտահոսքերի ներկա արժեքը:

Ներկա արժեքի որոշման համար առևտրային բանկը կարող է կիրառել հետևյալ բանաձևը.

$$PV = FV * 1 / (1 + r)^n$$

Որտեղ, PV-ներկա արժեքն է

FV-ապագա արժեքը

R-տոկոսադրույքը

n-ժամանակահատվածների քանակը

Ջուտ ներկա արժեքի մեթոդը առաջարկում է հաշվարկել քննարկվող նախագծերի զուտ արժեքը և ընտրել այն մեկը, որն ունի դրական զուտ ներկա արժեք: Ջուտ ներկա արժեքի հաշվարկման համար հաշվարկվում է նախագծի ընթացքում դրամական ներհոսքերի և արտահոսքերի ներկա արժեքը գեղջելով դրանք կապիտալի գնով կամ վերադարձի նպատակային դրույթաչափով: Ապա հաշվարկվում է դրամական ներհոսքերի և արտահոսքերի ներկա արժեքների տարբերությունը: Այս պարագայում հնարավոր է երեք ելք.

1. Երբ զուտ ներկա արժեքը դրական մեծություն է, ապա նշանակում է, որ նախագծի հետ կապված դրամական ներհոսքը ավելին է, քան կապիտալի արժեքը: Այսինքն կարելի է ձեռնարկել նախագիծը:
2. Երբ զուտ ներկա արժեքը բացասական է, ապա ավելի նպատակահարմար է քննարկել այլ նախագիծ, քանի որ կապիտալի գինն այս պարագայում ավելի բարձր է:
3. Երբ զուտ ներկա արժեքը հավասար է զրոյի, ապա նախագծից դրամական հոսքերը նույնն են, ինչ կապիտալի գինը: **Վերադարձի ներքին դրույթի մեթոդով ներդրումների արդյունավետության գնահատման համար պետք է իրականացնել հաշվարկ, որը կատարվում է հետևյալ քայլերով:**
 - Հաշվարկվում է զուտ ներկա արժեքը՝ օգտագործելով առևտրային բանկի կապիտալի արժեքը,
 - Երկրորդ քայլով հաշվարկվում է այլ զուտ ներկա արժեք՝ հիմք ընդունելով այլ դրույթաչափ,
 - Երրորդ քայլով բանաձևի միջոցով որոշվում է վերադարձի ներքին դրույթը

$$\text{Վերադարձի ներքին դրույթը} = a + (NPVa / (NPVa - NPVb)) * (b - a) \%$$

Որտեղ՝ a-դրույթաչափերից ցածրը

b-դրույթաչափերից բարձրը

NPVa-զուտ ներկա արժեքը՝ օգտագործելով դրույ-
քաչափերից ցածրը
NPVb - զուտ ներկա արժեքը՝ օգտագործելով դրույ-
քաչափերից բարձրը

Հետվճարի ժամանակաշրջանի մեթոդը քննարկված մեթոդներից պարզագույնն է: Այն հանրագումարի է ենթարկում դրամական ներհոսքները և զնահատում այն ժամանակատավածը, որում բանկը ստանալու է իր ներդրած գումարը:

Այս մեթոդի թերությունը կայանում է նրանում, որ այն երկու ներդրումների համեմատման ժամանակ ճշգրիտ արդյունք չի ապահովում: Այստեղ հիմքը դրվում է միայն ներդրումների ծածկման ժամանակահատվածի վրա:

Քննարկենք ներդրումային նախագծի արդյունավետության զնահատումը՝ օգտագործելով վերը նշված մեթոդները:

Ենթադրենք առևտրային բանկը պետք է ներդրում իրականացնի, 350 000 ՀՀԴ, որից ակնկալում է ստանալալ հետևյալ դրամական հոսքերը: Կապիտալի արժեքն է 5%:

Աղյուսակ 1

Ներդրումային նախագծի արդյունավետության գնահատում

			Տոկոսադրույք	5%
Տարի	Դրամական հոսքեր (հազ. դրամ)	Ներկա արժեք		
0	-350	(350.00)		
1	100	95.24		
2	200	181.41		
3	150	129.58		
4	75	61.70		
Հետվճարի ժամանակահատված		3 տարի		
Զուտ ներկա արժեքը		117.92		
Վերադարձի ներքին դրույք		19.25614%		

Ներկայացված հաշվարկից պարզ է դառնում, որ քննարկվող նախագծի զուտ ներկա արժեքը դրական մեծություն է և ավելին է, քան կապիտալի սպասվելիք արժեքը 5%: Այսինքն բանկը կարող է ներդրում իրականացնել:

Վերադարձի ներքին դրույքաչափի մեթոդի կիրառմամբ հաշվարկելիս ստանում ենք 19.25614%: Սա նշանակում է, որ եթե լինի մեկ այլ նախագիծ, որը կարող ապահովել 19.25614%, ապա առաջին նախագիծը դուրս կմնա ընտրությունից:

Հետվճարի ժամանակաշրջանի մեթոդով նախագիծը կատարված ծախսերը կմարի ներդրումների 3 տարում, սակայն սա դեռ չի նշանակում, որ տվյալ նախագիծը եկամտաբեր է առևտրային բանկի համար:

Քննարկված մեթոդներից միջազգային պրակտիկայում առավել տարածված է զուտ ներկա արժեքի և վերադարձի ներքին դրույքաչափի մեթոդները, որոնք նաև կարող են կիրառվել ՀՀ պրակտիկայում: Սակայն մեր առօրյայում նշված մեթոդների կիրառումը պետք է զուգակցվի ԿԲ նորմատիվների պահպանմամբ:

Ներդրումների արդյունավետության մեթոդների քննարկումը ՀՀ բանկային համակարգի բարեփոխումների կարևորագույն ուղղություններից է: Մեթոդների մշակումը պետք է համակցվ կապիտալի ռիսկի կառավարման մոդելների հետ, որոնք մեծ նշանակություն ունեն բանկի կապիտալի արդյունավետ կառավարման հարցում:

АННОТАЦИЯ

Ануш Гаспарян

ОЦЕНКА ИНВЕСТИЦИОННОЙ ЭФФЕКТИВНОСТИ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ

Ключевые слова – *инвестиции, банковское дело, эффективность, чистая приведенная стоимость, внутренняя норма доходности, возврат*

Банки в своей деятельности должны быть в состоянии обеспечить требуемого соотношения между рентабельностью и ликвидностью. Банки должны стремиться к укреплению своего общего капитала, сохраняя пропорции за счет собственных средств и средств привлеченных от клиентов. Отбор инвестиционных проектов стало серьезной проблемой для коммерческих банков.

Есть целый ряд методов оценки эффективности инвестиционных проектов. Коммерческие банки имеют право использовать некоторые из них. Наиболее распространенным является метод чистой приведенной стоимости, метод внутренней нормы возврата, метод постоплатного периода, преимущества и недостатки которых обсуждаются в этой статье.

Anush Gasparyan, Doctor of Economics, Assistant
ASUE, Chair of financial accounting

**EVALUATION OF THE EFFECTIVENESS OF INVESTMENTS IN
COMMERCIAL BANKS**

Key words – investments, banking, efficiency, net present value, internal rate of return, payback

In the course of their operations, banks should be able to maintain the necessary balance between profitability and liquidity. This optimization is related to the ratio of banks' capital. Each bank should seek to strengthen its total capital, while maintaining the proportions of the shares and funds of clients.

Selection of investment projects has become a serious problem for commercial banks. There are a number of methods for evaluating the effectiveness of investment projects. Commercial banks may use some of them. The most common methods are the method of net present value, internal rate of return method, payback period method. Advantages and disadvantages of these methods are discussed in this article.